

ՄԱՔՐԱԿԵՆՑԱՂ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

- 1. ԱՍՏՈՒԱԾ՝ ՀՈԳԻ Է, ԼՈՅՍ Է, ՄԷՐ Է**
- 2. ՅԻՍՈՒՍ ԻՐ ԲԱՐԵԿԱՄ ՂԱԶԱՐՈՍԻ
ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԵԱՆ**
- 3. “ԵՄ՝ ՏԷՐՍ ՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՁԵՐ
ՈՏՔԵՐԸ ԼՈՒԱՅԻ, ԴՈՒՔ ԱԼ
ՊԱՐՏԱԽՈՐ ԷՔ ԻՐԱՐՈՒ ՈՏՔԵՐԸ
ԼՈՒԱԼ”**

**RELEVANT REFLECTIONS FOR
TODAY'S CHRISTIAN**

**ՊԱՏՐԱՍԵՅ
ԱԼՊԷՐԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2000**

Ձ Օ Ն Ե Ր Գ

Այս հրատարակութիւնը կը նուիրեմ

95 տարեկան ժիր և համեստափայլ

ՏԻԿԻՆ ԱՐՄԻՆԷ ԻՅՆԷՃԱՆԻ

որ

**Մշտաջանօրէն կը կատարէ ստուգումները
Կանթեղալոյս հրատարակութեան:**

Աստուած աւելի ո՛վ վարձատրէ այս խոնարհ

և

Կամաւոր գործակցութիւնը և պահէ զինք

Առողջ և հեռու փորձանքներէ:

ԱՍՏՈՒԱԾ ՀՈԳԻ Է, ԼՈՅՍ Է, ՍԷՐ Է

ՅոՎ. Դ. 24, Ա. ՅոՎ. Ա. 1, Ա. ՅոՎ. Դ. 8, 16

Անբաւելի և Անպարփակ, Ամենատես և Ամենուրեք Տէրը՝ Աստուած Ի՛նքն է: Պատմութեան սկիզբէն ի վեր, մարդ արարած եղած է աստուածապաշտ: Անաստուածութիւնը *atheism* սկսաւ 18-րդ դարէն յետոյ: Հեթանոս կամ վայրենի կոչուած բոլոր մարդկային Բաղաճակրթութիւնները հիմնուած են աստուածապաշտութեան՝ բնականօրէն անբացատրելի գօրութեան մը վրայ:

Աստուած, գերբնական և գերզգայական, ենթակայ չէ սահմանումի, բանական կամ զգայական ճանաչման, այլ Յայտնութիւնն է Իր Յիսուս Որդւոյն մարմնացեալ՝ Մարդեղութեամբ միայն:

Գտնել զԱստուած վերջնականապէս ու ամբողջապէս անհնարին է, իսկ չփնտռելը՝ կործանարար: Մարդկութիւնը աւելի շատ պէտք ունի Աստուծոյ, քան երկիրն ու միւս մոլորակները՝ Արեւին: Իմացականութիւնն ու կամքը մարդկային հոգւոյն վրայ կը նշմարեն լո՛յսը հզօր էակի մը, որ կ'իրագործէ մարդոց մէջ ճշմարիտը, բարին, օրինականը բացարձակ և անհուն կերպով, անիկա Աստուած է: Աստուած Բարեհաճ է չարերուն և ապերախտներուն հանդէպ: *«Գլխած եղե՛ք, ինչպէս որ ձեր Հայրը գլխած է»* ըսաւ Յիսուս:--Ղուկ. 2. 35:

Սկզբնական ջրջանին կրօնքի մէջ ընդունուած են բազմաթիւ աստուածներ որոնցմէ մէկը համարուած էր գերագոյն աստուած: Յոյներու մօտ՝ Զեւսը, իսկ հայերու մօտ՝ Արամազդը: Նախնական մարդուն համար, Աստուած մարդակերպ էակ մըն էր, յետոյ Ան դարձաւ Հոգի, անհուն Զօրութիւն և ի վերջոյ բարեգութ՝ Ողորմութիւն և Սէր՝ Յիսուս Որդւոյն յայտնութեամբ:

Ըստ Եզնիկ Կողբացիի, միակ և իրական էութիւնը Աստուած է, մշտնջենական, ոչինչով պայմանաւորուած, բայց ամէն ինչի պատճառ հանդիսացող էակը: Իդէալիստական փիլիսոփայութեան ըմբռնումով՝ մշտնջենաւոր է Իր տիեզերական գօրութիւնը, Ի՛նքն է նախապատճառը և նախասկիզբը ամէն բանի:

Եզիպտացիք կը պաշտէին արեգակը՝ Օզիրիս անունով որպէս աստուած: Պարսիկներու համար Որմիզդը բարի արարածներու աստուածն էր, իսկ Ահրիմանը չարերու: Հեփեսոսը յունաց դիցաբանութեան մէջ ճարտարարուեստի աստուածն էր, Աթենասը իմաստութեան աստուածուհին: Յունաց դիցաբանութեան մէջ, Զեւսը երկնքի և երկրի աստուածն էր, Պոսիդոնը Ծովու, Պլուտոնը ստորերկրեայ

աշխարհի:

Միաստուածեան կրօններու մէջ, ան ճանչցուած էր որպէս գերագոյն էակը, որ ստեղծած է երկինքն ու երկիրը և ամէն ինչ որ կայ, և կը խնամէ զանոնք: Եբրայեցիք եհովա կը կոչէին Զայն, Իսլամները՝ Ալլահ, Քրիստոնեաները՝ **Հա՛յր Երկնաւոր**: Այժմ անուանական քրիստոնեաները ուրանալով իրենց Աստուածը կ'երկրպագեն դրամը, հեշտանքը և փառամոլութիւնը, ու կ'ըսեն. *«Բնութի՛նն էր, որ՛նն են մեր աստուածը միայն Բեզի կը հնազանդիւմ...»*

Պօղոս Առաքեալ ներշնչման ու հոգեկան յափշտակութեան մը պահուն կ'ըսէ.

«Մ. ի՛նչ խորու նկ են Աստուծոյ արաս ողորմութիւնը, իմաստութիւնն ու գիտութիւնը: Ըրբա՛ն անճննելի են անոր վճիռները, և անզննելի են անոր ճամբաները: Էս իրապէս, "Մ՛վ կըցաւ երբե՛մ Տիրոջ միտքը կարդալ, Կա՛մ ո՛վ երբե՛մ խորհուրդ տուաւ անոր, որ փոխարէնը առնելի՛ք ըլլայ անկէ»: Ըրովհետեւ ամէն ինչ իրմէ է, իրմով և իրեն համար գոյութիւն ու նի: Յաւէտ փա՛ռք Իրեն:

Ամէնա՛-- Հռոմ. ԺԱ. 33-36:

Աստուած մէկ է իր իսկութեամբ և բնութեամբ և բազում Իր յատկանիշներով և հանգամանքներով: Աստուած գիտականօրէն ապացուցանելի չէ, որովհետեւ *վերանցական է transcendent*. Աստուած տարբերէն կերպարանք չընդունիր և մարմնի՛ աչքի տեսողութեան չ'ենթարկուիր: Ոչ միայն ձեռքով չի ջօջափուիր, այլ մտքով ալ չի վերլուծուիր, իսկ եթէ Ինք կամենայ կը ճանչցուի Իր արժանաւոր հաւատացեալներէն: Աստուածորդի Յիսուս, սապէս յայտնաբանած է Հա՛յրը, ըսելով.

«Ամէն ինչ արուեցաւ ինծի իմ Հօրմէս. և ոչ ոք կը ճանչնայ Որդին, եթէ ոչ՝ Հայրը. և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդին, և ան՝ որուն ուզէ յայտնել Որդին»
--Մատ. ԺԱ. 25-27:

Գոյացութիւններու իսկութիւնը անխուզարկելի: Նիւթ ըսուած բանին իսկութիւնը անխորաչափելի է: Տիեզերքի իրականութեանց իսկութիւնը հասկնալու համար, երբ չափէն աւելի մօտենանք, մայր բնութիւնը կ'արգիլէ:

1. Երեւոյթները որոջ հեռաւորութենէ մը դիտելու ենք:
2. Բանի ստեղծագործութեան ստեղնաշարին վրայ բարձրանանք, գործօն սկզբունքն ու տիրապետող երեւոյթը հետզհետէ որպէս

լո՛յս կ'երեւի:

Արբուժիւնը ո՛չ թէ Աստուծոյ ստորագելիներէն մին պարտ է ճանչնալ, այլ՝ խորագո՛յն իսկութիւնն է Աստուծոյ: Հայ Պատարագամատոյցը կը սկսի.

«Խորհուրդ Խորին, անհաս անսկիզբ»:

Ոհ, ի՞նչ հիասքանչ Արարիչ է Աստուած:

1. Տիեզերք մը ուր 100 միլիար ծիր կաթիններ (galaxy), որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ աւելի քան 100 միլիար աստղ, որոնք կը յայտնացուցանեն ստեղծագործ գոբութիւնը անճառելի Արարիչին:

2. Մարդկային ուղեղը 3.3 1b. կշռող հիւսուածքի զանգուած մը կը ներկայացնէ, որ 50-100 միլիար շղաքջիջներ neurons ունի, որոնց իւրաքանչիւրը 10,000 օղակներով շղթայուած են իրարու: Միթէ ասոնք ապացոյց մը չե՞ն իմաստալից և արարչագործ Զօրութեան մը գոյութեան:

Հակառակ այդ բոլորին, Աստուած անանուն Մէկը չէ՛:

Աստուած, "անիկա" մը, "անոնք" մը, "թաղեցի" մը չէ՛, այլ *Բարեկամ* մըն է, որ Անուն ունի ու Անոր հետ կրնանք յարաբերիլ: Աղօթքը կը սկսի երբ այդ Ամենակալը և Հեռաւորը կը դառնայ Մերձաւոր և հետը կը խօսինք որպէս *Հայր Երկնաւորը*, "Դուն"-ով եզակի, ու ոչ յոգնակի:

Պայծառ երկնակամար մը կը յիշեցնէ մեզի, թէ Արարիչ Աստուած իրապէս, ստուգապէս և անհամեմատօրէն տարբեր է արարչագործ ստեղծագործութենէն: Ինչպէս փայլատակող աստղ մը հակադրութիւնն է իր խաւար ջրջապատ միջոցին, նոյնպէս է նաեւ աստուածային Լոյսը մարդու մտքին:

Մարդկային մօտեցումը առ Աստուած պարտ է ըլլալ խո՛ր ու ծնրադիր յարգանօք ու խոնարհութեամբ: Աստուածաբանակա՛ն խորհրդաբանութենէ յետոյ իսկ, մեր ընելիքը՝ միա՛յն դպչիլ է Անոր հագուստի բղանցին... : Մեր մտային և հոգեկան ձեռքը շատ կարճ է Ձինք ողջագուրելու: *«Իրմով է որ կ'ապրինք, կը ջարժինք և կանք»* կ'ըսէ Պօղոս առաքեալ Աթէնքի մէջ Արիստագոսի իմաստասերներուն--Գործք. ԺԷ. 28:

Մեր Տէրը Յիսուս ըսաւ.

«Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»:

--Յով. Դ. 26:

«Հոգի» բառը կը նշանակէ ու կը յայտնաբանէ այդ անտեսանելի գործօն Զօրոյթը, որ կը շարժէ մարդկային, ընկերային, մշակութային, գաղափարական և ֆաղափական ընթացքը, ըմբռնումը և կամեցողութիւնը: Հոգի Աստուած կը գերազանցէ՝ նիւթին ներկայութեան: Ոգին որեւէ կապակցութիւն կամ յարում ունենալու չէ նիւթականին կամ "ես"ին հետ: Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն.

«Էթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը և ետեւէս գայ»--Մատթ. ԺԶ. 24, Մարկ. Ը. 34, Դուկ. Թ. 23

Աստուծոյ Հոգւոյն կարեւորութիւնը անոր աստուածաբանական յատկանիշները չեն, այլ Անոր **դէ՛րք** մեր կեանքին մէջ: Մարդ արարած մարմին և հոգի է, սակայն իրապէս մէկ է: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ բարի կամֆին արտայայտութիւններն են: "Հոգի" բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդհանուր անձնաւորութեան: "Հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումը:

Աստուած տիեզերքի մշտահոս կեանքին Աղբիւրն է, ու մարդը Անոր ծունչէն անմահական կեանքի կայծ մը՝ *անձնաւորութիւն է*, մը ընդունած է: Տիեզերքի մէջ ամէն ինչ Անով կը ծնի ինչպէս որ բնութեան ծոցին մէջ, գարնան, նոյնպէս մարդկային կեանքը կը վերակենցաղի Յիսուսի Յարութեան շնորհիւ: Աստուած Հեղինակն ու Ակնադրիւրն է համայն տիեզերքին, ծայրագոյն գիտակցութեան ու ամբողջական գօրութիւններուն: Ծրջանակի մը նման որուն կեդրոնը ամէն տեղ է, ու անոր ջրջագիծն ալ ամէն տեղ:

Արարիչ Աստուած բոլոր գոյերէն ու արարածներէն գերիվեր է: Աստուած «Խորհուրդ խորին է՝ անհաս և անսկիզբ»: Կարելի չէ Աստուծոյ որեւէ գոյացական մասնիկ կամ յատկանիշ վերագրել: Աստուած Խօսք է, բայց այդ Խօսքը որչափ զուգահեռ է մարդկային խօսքին ու ըմբռնումին, անճառելի է, ուստի կարելի չէ նմանը Աստուծոյ վերագրել: Այո՛, կարելի չէ նոյնիսկ Աստուծոյ մասին ըսել՝ Ան գոյ է: Որովհետեւ իւրաքանչիւր գոյութիւն նիւթին գոյացութեան և պատահարներու, այսինքն՝ որակի, ֆանակի, չափի, գոյնի, ձեւի, համի, հոգիի յարաբերութեանց մէջ է, որ կ'ըմբռնենք ու կ'իմանանք, որպէս մարդկային արարածներ, մինչդեռ Աստուած գերիվեր է այս բոլորէն:

Ո՞րչափաբար նիւթաբար, Աստուծոյ վրայ դրաւ իր վատահոլութիւնը, որ աշխարհէ անդին է, սակայն գործօն պատմութեան մէջ: Անոր սէրն ու ներողամտութիւնը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդկային ապրումը և Անոր յուսադրիչ խոստումը կ'ազատէ մարդը

հիասթափութենէ: Այսպիսի յոյս մը կու գայ մի միայն Աստուծոյ վերջնական յաղթութեան հաւատքէն:

Աստուածաշունչը ցոյց կու տայ, թէ Աստուած «անմատչելի լոյսի մէջ կը բնակի», և «մարդոցմէ ոչ ոք տեսած է և ոչ ոք կրնայ տեսնել Չայն»--Ա. Յիմ. 6.16:

«Այդ յայտնութիւնը իր աստեղին պիտի կատարէ Աստուած ինձ, ան՝ որ երանելին է և միակ հզօրը, թագաւորներու թագաւորը և տէրերու Տէրը, միակը՝ որ անմահ է. Ան՝ որ անմատչելի լոյսին մէջ կը բնակի. և ոչ ոք կրնայ տեսնել Չայն: Յախճեան Անտրն են պատիւն ու զօրութիւնը: Ամէն»

--Պօղոս առաքեալ:

Ահա թէ ինչու՝ յաճախ Աստուած կը պատկերանայ լոյսի փայլատակումով: Արարիչ Աստուած ոչ միայն նիւթին ստեղծիչն է ոչինչէն, այլ Ան շնչաւորող, ձեւաւորող, կարգաւորող բացարձակ Ոգին է և Ազգունքը:

“Աստուած” անունը կը բխի Անոր *“արարիչ”* իմաստէն: **Տէր՝** անունը կու տանք Աստուծոյ մեզ **սիրած** ըլլալուն համար: Աստուած ո՛չ թէ որեւէ տեղ է Ան, այլ Ի՛նքն է տեղը (Վայրը, Միջոցը):

Ոչ թէ որեւէ ժամանակ գտանելի է Ան, այլ Ի՛նքն է ժամանակը և ժամանակներու գոյացութիւնը: Աստուած անժամանակ է, իսկ երբ կամեցաւ ստեղծել արարածները, սկիզբ ու վերջ դրաւ անոնց կեանքին (զանոնք մահկանացու ստեղծեց): Մարդ արարածներուն շնորհուած *ազատ կամքը*, ա՛յդ աստուածային մասնիկը մարդ էակի մէջ, պարտ էր ապացուցուի՛լ նախ քան որ մարդ էակ արժանանայ յաւիտենական կեանքի--Յով. Ա. 10-12

Աստուած *անքան* աշխարհը հոգացած է Իր հրաշագեղ հոգածութեամբ, որքա՛ն աւելի Ան պիտի հոգայ Իր *բանաստեղծ* ստեղծագործութիւնը (մարդ էակը) և ցոյց պիտի տայ Իր սէրն ու գթութիւնը որպէս Հայր երկնաւոր: Ինչպէս որ Աստուած ստեղծեց աշխարհը Իր իրագործող Խօսքով, նոյնպէս ալ Յիսուս ծնաւ կոյս Մարիամէ Անոր անհասանելի Խօսքովը: Որովհետեւ մարդ անկարող էր տեսնել Անտեսանելին՝ զԱստուած, ու մերձենալ Անմերձենալիին, Աստուած Որդին մարդացաւ (եղաւ Մարմին) որպէսզի մենք ալ հաւատալու՛մ Անոր, ըլլանք Աստուծոյ որդիներ: Մարդ էակի գոյութեան նպատակը *նմանի՛լ* է Աստուծոյ:

Աստուածային ստեղծագործ **Սէրը**, (Յիսուս) ինչպէս որ խոնարհեցաւ (իջաւ) աշխարհ պարգեւելու սէր և իմացական կեանք

մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս **բարձրանալու** է դէպի տիեզերական Սէր և Կեանք ուր պիտի գտնէ իր Արարիչը և Տէրը: Աստուած ոչ միայն Ինքզինք բացատրեց մարդուն. այլ՝ *հաղորդակի՛ց* եղաւ անոր: Ս. Գրիգոր Նարեկացին, ներշնչումի և հոգեկան յափշտակութեան մէջ կը գրէ, ըսելով իր արիւնակիցներուն.

*«Զի դու միայն ես երկնում անճառ
և երկրում՝ ազնիւն,
Գոյութեան ատրրերի մէջ և աշխարհի
բոլոր ծագերում,
Ակիզբն ամէն ինչի, և ամէն ինչի մէջ՝
ամբողջ լրումով»:*

Առանց Աստուծոյ ոչինչ կրնայ ընել մարդ, բայց առանց մարդուն ոչինչ կ'ուզէ ընել Աստուած: Մէկը *կարծնալու* ինդիր է, իսկ միւսը *կամենալու*: Աստուած կ'ուզէ որ համագործակցիմք Իրեն հետ, և հրաւիրենք Զինք մեր կեանքին մէջ: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան բացատրել Զինք, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել Զինք:

Թէեւ Աստուած Մէ՛ր է, սակայն սէրը Աստուած չէ՛ Յիսուս Զրիստոսի ըմբոնումով: Ինչպէս որ Աստուած մէ՛կ է, սակայն մէկութիւն մը Աստուած չէ: Աստուած *անանձ նականութիւն է*, չէ՛, կոյր գօրութիւն մը, մեծութիւն մը և գիտութիւն մը չէ՛: Յիսուսի ջրթներուն վրայ Աստուած գերազանցապէս ու վեհափառօրէն **Հայրութիւն** է, որ կը զբաղի նոյնիսկ պարզ ճանճողութեամբ: Միայն Աստուած է որ սիրուելու է՝ հոգում, սրտով, մտքով և բոլոր գօրութեամբ, իսկ **դրացիին** սէրը կը հաւասարի ենթակային **անձին**: Աստուած ինչու կը սիրէ մեղաւորները: Ան կը սիրէ, ո՛չ որովհետեւ մենք մեղաւոր ենք, այլ որովհետեւ Աստուած Սէր է: Զրիստոսով՝ Աստուած կը թափանցէ մարդկային իրականութեան ու կը յայտնացուցանէ Իր սէրն ու ողորմութիւնը:

Աստուած ինքնաբացայայտման յայտնութիւնն է, կարելի՞ է որ առաջին դարէն յետոյ դարդի Ինքզինք յայտնելէ: Դէպի Աստուած կան բազմաթիւ և զանազան ճամբաներ, գլխաւոր ճամբան դէպի Աստուած, Աստուած Ինքն է: Պուտտայականութեան մէջ չկայ Աստուած, չկայ գերբնական Ուժ, չկայ Արարիչ, չկայ արտաբն Փրկչի գաղափարը: Աստուած եղած էր ջունչ, եղած էր ձայն, եղած էր երեւում: Զրիստոսով՝ Անոր Մարդեղութեամբ, Ան եղաւ Մարմին:

Յիսուս Բրիստոս ոչ ուսմունք է, ոչ տեսութիւն, այլ Ան Իր ասարումով բացայայտեց Աստուած անիմանալին:

«Խորագոյն վիշտի և յուսախաբութեան մէջ, կայ յոյս և անհաղթաբար ցաւի ու տառապանքի մէջ երբ տիեզերք յանկարծ կործանի, և ամայանայ, կայ Աստուած»:

Երբ կ'ըսենք Աստուած սեր է, այդ կը նշանակէ թէ, Ան ճառագայթում, Լուսաւորում, Անձնանուիրում և Ծառայութիւն է: Տիեզերքի ստեղծագործութեան ոյժը Ա՛րն է: Մարդու կեանքի երջանկութեան աղբիւրը Ա՛րն է: *«Ա՛նքը կ'արտայայտուի կեանքով ու գործով, ծառայութեամբ ու բարիքով կը մարմնանայ և, ի հարկին, խաչով կը կենուի»* -- **Գարեգին Ա Կաթողիկոս:** Սեր բառը չէ եղած *հարողուելու* համար, այլ՝ *կիրարկուելու* մեր կեանքի բոլոր շրջաններուն: Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի ըլլայ և որքան աւելի թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ իրաւունք ունի ան մեր գութին և մեր սիրոյն:

Յիսուս Բրիստոս Լոյսն է բանականութեան, Յոյսն է Հոգւոյ, և սէրը անհուն սօրէն ջերմ սրտի մը:

Լոյսի հիմնական մեծութիւններէն մէկը, բնութագրումն է տեսանելի ճառագայթման աղբիւրը՝ Աստուծոյ: Աստուած նախ ցոյց կու տայ Իր լոյսը, ապա այդ լոյսին ընդմէջէն Ինքզինքը: Բրիստոնէութիւնը հայ ժողովուրդին աչքին լոյս է, ուստի անոր մատակարարը "Լուսաւորիչ": "Աստուած մատակարարած է իր ջնորհները թէ՛ հրեաներուն և թէ՛ հայերուն, մէկուն տասը պատուիրաններ տալով, միւսին՝ երեսունըվեց երկաթագրեր" -- **Կորիւն:**

Հայը երգած է աստուածալոյս շարականները ցոլացնելով զԱստուած.

«Լո՛յս,
Արարիչ Լուսոյ,
Առաջին Լոյս
Բնակեալդ ի Լոյս անմատոյց,
Ի ծագել Լուսոյ առաւօտուս
Ծագեա՛ ի հոգիս մեր
Ջլոյս Զո իմանալի» -- **Ս. Ներսէս Ճնորհալի**

Մարդու յոգնած մարմինը կազդոյր կը փնտռէ, իսկ հոգին

լոյս: Առաքեալներու կեանքը համակ, եղաւ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չկորնչի յաւեր-
ժութեան Լոյսը՝ Յիսուս Բրիստոս: *«Աստուած դեռ նոր Լոյսեր ու նի
ծագեցնելիք Իր Առքը Խօսեցին»* --**Երէց Ռօզիւստն**: Նոր Լոյս և
յայտնութիւն կ'որոնէ սպասող մարդկութիւնը: Աստուած ըսաւ. *«Թող
Լոյս ըլլայ»*: Տիեզերքը լուսաւորուեցաւ, բայց մարդոց սրտերը ոչ:
«Իսա արէն թող լոյս ծագի»՝ եղաւ յաջորդ հրամանը, և ծագեցաւ մեր
սրտերուն մէջ ալ Աստուծոյ փառքի գիտութեան Լոյսը: Աստուածա-
յին Լոյսը խաւարէն՝ լոյս, մահէն՝ կեանք, ապականութենէն անա-
պականութիւն և անգիտութենէն դէպի Իր ճշմարիտ գիտութիւնը
առաջնորդեց մարդկութիւնը:

Ինչ որ է արեւը բնութեան համար, նոյնն է Յիսուս մարդոց
հոգիներուն համար: Անարժեք նկատուածը Յիսուսի՝ լոյսով, կ'ար-
ժեքաւորուի, աննշան կարծուածը՝ Անով նշանակութիւն կը ստանայ:
Կեանքը լոյսի և խաւարի պայքարն է, Բարիի ու չարի կռիւն է:
Լոյսի ու խաւարի պայքարին մէջ, լոյսի յաղթութիւնը աներկբայելի
է: Խաւարը Լոյսին դիմաց կը փախչի:

«Լոյս, Արարիչ լուսոյ, Առաջին լոյս»:

«Լոյս, իմանալի լոյս»:

«Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ»:

Առաջին բրիստոնեաները ապրեցան Յիսուսի լոյսով և իրենց
կեանքին օրինակը վարակիչ դարձաւ: Խօսքէ աւելի, բրիստոնեա-
լիւնը եղաւ ապրուած կեանք իրականութիւն և ոչ միայն
դաւանանք ու հաւատամք: Անոնց կեանքը համակ, եղաւ ծառ
այլութիւն և նուիրում: Ինչո՞ւ անոնց կեանքին օրինակը եղաւ
վարակիչ: Որովհետեւ անոնց "հաւատոյ հանգանակը" Յիսուսի
Խօսքերն էին, զորս պատուիրեց Իրեն հետեւող քաջերուն ըսելով.

*«Եթէ դուք զիրար սիրէք՝ ասով ամէնքը պիտի գիտնան
թէ դուք իմ աշակերտներս էք»* --Յով. ԺԳ. 35:

Եկեղեցական "հայրեր" մոռնալով կամ անտեսելով Յիսուս
Բրիստոսի ճառագայթող վերոյիջեալ պատուէրը՝ Հաւատոյ Հան-
գանակը, իրե՞նք ուզեցին գրել հանգանակ մը ցոյց տալու իրենց
իմաստասիրական կարողութիւնը: Մարդկային անսեր փառամո-
լութիւնը պատճառ դարձաւ Բրիստոսի Մարմնին (Եկեղեցիին)

բաժանման, սկարութեան և Միջին Արեւելի, հիւսիսային Աֆրիկէի և Ապանիոյ Բրիտանացի եկեղեցիներու կորուստին, Յ-րդ դարուն:

«Ով որ կ'ըսէ, թէ զԱստուած կը սիրէ, բայց իր եղբայրը չի սիրեր, ստախոս է» --Ա. Յով. Դ. 20: Ահա՛, այսպիսի յորդորներով Հայրապետը զգուշացուց ժողովուրդը ծայրայեղ աշխարհապաշտութենէ (secularism), որ հոգին կը մթագնէ: «Ով որ զԱստուած կը սիրէ, պէտք է իր եղբայրն ալ սիրէ»: Խոնարհութիւն կը նշանակէ սիրել, և սեր կը նշանակէ ծառայել: Յիսուսը խաչեցին, որովհետեւ Ան ուսուց ա՛յն տեսակ սեր մը, որ վտանգ էր փառասէր կրօնաւորներու, սեր մը որ ամբողջակա՛ն նուիրում և անձնատրուութիւն կը պահանջէր:

Իրիմեան հայրիկ, իր ողջութեան ու մահէն յետոյ իսկ կ'ըսէ. «Զաւակներս, զիրար շատ սիրեցեք, որովհետեւ եթէ դուք իրար չսիրեք, ոչ մէկը ձեզ պիտի սիրէ»:

Աշխարհակալներ կը սիրեն իրենց նմաններուն նուաճելով ու յաղթելով զանոնք իսկ Աստուած սիրելով ու ինքզինք մասուցանելով աշխարհի, ուղարկելով Իր Միածին Որդին Յիսուս: Բրիստոս այնքան սիրեց մարդկութիւնը, որ իջնելով զօրութենական բարձունքներէ ոչ միայն "մարմին եղաւ", այլ և լուաց Իր աջակերտներուն ոտները և այսպէսով եղաւ բացառիկ օրինակը սիրոյ և խոնարհութեան: Կեանքի իսկական գեղեցկութիւնն ու զօրութիւնը սիրելու հրաշագործ արտայայտութեան մէջ կը կայանայ:

Փետուրով մը կարելի է ժայռերը կաղապարել, եթէ փետուրը սիրոյ ձեռքի մը մէջ է: Տալն ու տրուիլը սիրոյ արտայայտութիւններ են: Հնարաւոր չէ մէկու մը համար աճիլ բարոյապէս և հոգեւորապէս՝ առանց տալու շնորհին: Մեր աճումին չափանիշը՝ մեր սիրելուն և տալուն մէջն է: Մի միայն Անմերձեանալի Սուրբն է որ կը գերազանցէ մարդը, փրկելով զայն իր անձնակերպութեան փառասէր մոլութենէն որ կը կործանէ միաբանութեան պաշտամունքա՛յին միասնականութիւնը և կ'ուղղէ զայն դէպի մահ:

Գողգոթան միայն աշխարհագրական անուն մը չէ բարձունքի մը, այլ Բրիստոսի Արեամբ ու վկայութեամբ նուիրագործուած դէպք մը ու ցոլացումն է Աստուծոյ սիրոյն: Մարդկային այլազան սերերուն մէջ՝ Աստուծոյ սերը բառերով չի բացատրուիր, ծանրութեամբ չի կշռուիր, թուանշաններով չի չափուիր և զգացումներով չի թարգմանուիր, ո՛չ ալ մարդկային բարոյականը վսեմացնող առաքինութեան մը հետ կը բաղդատուի: Այս անզուգական սերը՝ հաւատացեալին բոլորանուէր ընծայումն է Աստուծոյ առաքելութեան

և վկայութեան:

Յիսուս երկար չապրեցաւ, սակայն Իր ապրումով ու նուիրումով ապրեցուց ուրիշները: Լահատակներ կ'ապրին իրենց գործերով: Յիսուսի կեանքը գերազանց օրինակն է խոնարհութեան և անձնագոհութեան: Իր ապրումով, նուիրումով և անձնագոհ խաչելութեամբ ճշմարտապէս ցոյց տուաւ աշխարհամարդուն Աստուծոյ իմանալի՝ նկարագիրը:

Կ'ուզեմ պատմել իրական դէպք եղելութիւն մը որպէս մանրանկար մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի սիրոյն:

Կարմիր բանակին յաղթարջաւ գնացին, Համայնավարները կը փնտռէին կայսերական բանակի պատկանող կին մը, որ երկու երախաներ ունէր: Իրիկուն մը երիտասարդ կին մը, Լաթալի անունով որ նոյն տարիքը ունէր, զարկաւ այս կնոջ տան դուռը և հարցուց թէ ինք այս ինչ կի՞նն է: Լաթալին զգուշացուց այս մայրը թէ ինք ճանչցուած է ու այս գիշեր պիտի գնդակահարուի: Լաթալին խրատեց որ կայսերական բանակին պատկանող այս կինը փախչի: Մայրը նայեցաւ իր զաւակներուն և ըսաւ. "ինչպէ՞ս":

Լաթալին որ ցարդ թաղին մէջ պարզ կին մըն էր միայն, ըսաւ. "Դուն պիտի կարենաս, որովհետեւ ե՛ս պիտի կենամ հոս և յայտարարեմ որ ես ձեր փնտրած կինն եմ": Մայրը ըսաւ. "Բայց պիտի գնդակահարենք բեզ": Լաթալին պատասխանեց. "Ես զաւակներ չունիմ": Յիսուս նոյնը ըրաւ Գեթսեմանիի պարտէզին մէջ:

Եկէ՛ք ուրեմն միասնաբար, լայնախոն մօտեցումով և սիրոյ ու նուիրումի ճանապարհով, մեր առջեւ դրուած հրամայական գործերը տանինք պատուով, միասնական ու ամբողջական գործելակերպով և միշտ առաջնորդուած մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի խօսքով: Որովհետեւ Զրիստոնէութիւնն էր, որ ձեւ ու մարմին, իմաստ ու նուիրում տուաւ հաւատքի պայքարին:

Յիսուսի կոչումը արտայայտիչն է հոգեւոր պաշտօնեայի հաւատքին, յուզումներու ն, նուիրումին, ծառայութեան:

Յունուար 7, 2000

Թորոնթօ

ՅԻՍՈՒՍ ԻՐ ԲԱՐԵԿԱՍ ՂԱԶԱՐՈՍԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Անհուն Զգաստութիւն և անձնամասոյց Յիսուս Վարդապետ կարգ մը աշակերտներ ընտրելէ յետոյ հրաւիրուեցաւ հարսանիքի մը Կանա քաղաքին մէջ: Անթարզամտելի Ծնունդ Յիսուս իր առաքելութեան ընթացքին հրաւեր ստացաւ բազմաթիւ ճաշկերոյթներու և խնճոյքներու: Ան չմերժեց սոյն հրաւերները ու աշակերտներուն հետ գնաց բազմազան հացկերոյթներու: Յիսուս Իր Անձը ցոյց տուաւ մարդկային բոլոր դասակարգերուն մէջ, որովհետեւ Իրեն համար միայն մէկ դասակարգ կար, ու այդ էր՝ **ծառայութեան և զոհողութեան** կարիք ունեցողներու դասակարգը:

Անկէնադարձ կերտող Յիսուս՝ Ի՛ր ներկայութեամբ ոչ թէ բան մը կը պակսեցնէր հիւրասիրողին բակէն կամ կեանքէն, այլ բան մը կ'աւելցնէր: Օրինակ՝ Կանայի հարսանիքին, Ան բազմացուց փեսայի տան գինին, որպէսզի հարսնետորները ուրախանան: Փարիսեցիի մը տան մէջ, Ան ներում շնորհեց մեղաւոր կնոջ՝ Մարիամ Մագդաղենացիին և ան ուրախ ու շէնջող խիղճով մեկնեցաւ տուն:

Բարութեան մարմնացում Յիսուս Ի՛նք չփնտռեց հանդիսութիւն, հաճոյք և խրախճանք, այլ Ինք ստեղծե՛ց և շնորհեց ուրախութիւն և խանդավառութիւն ուր որ գնաց: Ո՛չ միայն հրճուանք և հանդիսութիւն ստեղծեց Ան, այլ նաեւ բժշկութիւն և առողջութիւն պարգեւեց բոլորին, և ալ աւելի՛ն, որ կը նշանակէ **մեղքերու թողութիւն և խղճի խաղաղութիւն**: Ան ըսաւ Իրեն ներկայացուած անդամալոյծին.

«Որդեակ Բու մեղքերդ ներուած են Բեզի»:

Միթէ կա՞յ աւելի մեծ հոգեկան ուրախութիւն և սրտի խաղաղութիւն: Աստուծոյ սէրն ու ներումը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդկային ապրումը և Անոր յուսադրիչ խոստումը կ'ազատէ մարդը հիասթափութենէ: Այսպիսի յոյս մը կու գայ մի միայն Աստուծոյ վերջնական յաղթանակի հաւատքէն: Յիսուս Իր յուսադրող ձայնով պատասխանեց Մարիամին, ըսելով. «Քեզի չ'ըսի՞, որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը պիտի տեսնես»: Յիսուս կը

դիմաւորէ մեզ ալ, ու իր կենսախրախոյս նայուածքով կ'ըսէ.

**«Տրդեակ, յուսահատութեանդ և թերահաւատութեանդ
գերեզմանին քարը գլորէ վերցուր»:**

Կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուս՝ Իր աջակերտներով գնաց Գալիլիոյ ծովուն հեռաւոր մէկ փոքր բժշկելու համար դիւահար մը, որ ենթարկուած էր անմարդկային կացութեան ու կը բնակէր գերեզմաններու մէջ... Նոյնիսկ Յիսուս Ի՛նք ալ գնաց գերեզման: Մարդիկ ինչո՞ւ կ'երթան գերեզման: Մարդիկ գերեզման կ'երթան թաղելու կեանք մը: Յուդարկաւորութիւն մը, թաղում մը, ուղեկցիլ է ննջեցեալին մինչեւ գերեզմանատուն: Համայնական գերեզմանատունը այն վայրն է, ուր մահացողներն ու ողջերը կ'ողջագուրուին հոգեպէս:

Նազովրեցի Յիսուս ինչո՞ւ չգնաց բժշկել Իր Ղազարոս բարեկամը անոր հիւանդութեան ժամանակ, սակայն գնաց անոր մահուանէն վերջ: Մեր Տիրոջ ուշացումը ոչ թէ պատահականութիւն է մը կամ դիպուած մըն էր, այլ Ղազարոսի թաղման ու անոր գերեզմանին առջեւ Յիսուս տալիք պատգամներ ունէր:

Պէտք է մոռնալ, որ Յիսուսի իւրաքանչիւր իրագործումները կրթելու և դաստիարակելու համար էին աջակերտները: Կեանքի շաց եղող Յիսուս, Իր ուշացումով դաստիարակել ջանաց աջակերտները, թէ ի՞նչ պարտ են քարոզել հաւատացեալի մը յուդարկաւորութեան ժամանակ: Մարդեղութեան փրկարար Զօրութիւն՝ Յիսուս քաջ գիտէր թէ Փարիսեցիք ի՞նչ դամբանական կը խօսին ննջեցեալի մը յուդարկաւորութեան: Ան գիտէր նաեւ Մադուկեցիներուն դաւանանքը՝, թէ մարդկային կեանքը վերջ կը գտնէ գերեզմանի կափարիչին փակումովը:

Յիսուսի հերոսական նկարագիրը Անոր հերոսական յուսադրումի՛ն մէջն էր, հետեւաբար թէ՛ որպէս երկնատափ Դաստիարակ աջակերտներուն և թէ՛ Իր ջուրջիներուն հաւատք ներշնչող, Ան Իր յուսադրիչ ձայնով պատասխանեց Ղազարոսի հիւանդութիւնը տեղեկացնողներուն, ըսելով.

**«Այդ հիւանդութիւնը մահաբեր չէ, այլ Աստուծոյ
փառքին համար է, որպէսզի անով փառաւորուի
Աստուծոյ Որդին»--Յով. ԺԱ. 4:**

Ուրեմն որքա՞ն հոգեպարար են և յուսադրիչ կարգ մը փորձութիւնները և նեղութիւնները, որոնք կը պատահին մեզի: Անոնք կրնան ըլլալ անլուծելի զանգակներ խաւար մթութեան մէջ, որոնք աւետումներն են գալիք շէնջող Լուսաբացին: Կեանքը դժուարադարձ և դժուարաբոյժ է, բայց ոչ յուսահատական: Յիսուս կը մխիթարէ սգաւորները և թախծալից սրտերը: Յուսահատներուն յոյս կը ներշնչէ և բարոյապէս ինկածները ոտքի կը կանգնեցնէ: Ո՛վ թերահաւատներ «Խորագոյն վիշտի և յուսախաբութեան մէջ, կայ յոյս և անագնազօր ցաւի ու տառապանքի մէջ երբ տիեզերք՝ կործանի ու ամայնայ յանկարծ, **կա՛յ Աստուած**»: Յուսահատութեան, վհատութեան ու յոյսի գազաթնակէտին կանգնած էր կոյր Բարտիմէոս երբ Յիսուս կ'անցնէր Երիֆովի փողոցներէն:

Յիսուս, Ղազարոսի մահը պատճառ սեպելով, ջանաց ցոյց տալ իր ապագայ եկեղեցիին, թէ Ան ի՛նչ պարտ է քարոզել յուղարկաւորութեան՝ մահուան տրտում-տխուր դագաղի մը առջեւ: Ձրի գովասանքներ և տափակ խօսքեր աւելորդ են դագաղին առջեւ, որովհետեւ մահաբոյր դագաղին մէջ ամէն մեծութիւն և փառք կը մարին ու կը լռեն:

Ի՞նչ կը նշանակէ մահն ու յուղարկաւորութիւնը:

Ոմանց համար Անկենդան և ուղեկորոյս կամուրջ: Ուրիշներու համար անփախչելի վախճան և անէացում: Մահը մեր կեանքին ամենամեծ առեղծուածն է. ըստ երեւոյթին հակադրութիւնը մեր գոյութեան: Արդարադատ մահը իւրաքանչիւր մահկանացուին յարութենէն յետոյ, իր արժանաւոր տեղը կը սահմանէ. փառք ու յաւերժութիւն, կամ կորուստ ու մոռացում: Կեանքը՝ կու տայ, սէրը՝ կը փաշխէ, մահը՝ միայն կ'առնէ: Հին Կոտակարանի հաւատացեալներէն ոմանք կը հաւատային, թէ.

*«Մարդոց որդիներու ն պատահածք
 Եւ անասու ններու ն պտահածք մէկ է:
 Ահկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս կը մեռնի:
 Ու ամէնու ն ջու նցը մէկ է:
 Եւ մարդը անասու նէն աւելի բան մը չու նի,
 Վասնզի ամէնը ու նայնութիւ ն է»--Ժողովողի 9. 19:*

Մահը մեր կեանքի մեծագոյն կորուստը չէ: Մարդ իր

մեծագոյն կորուստը կը կրէ երբ իր մէջ կը մահանայ ասորելու տենչը, մեղքի դէմ պայքարելու կամքը և ծառայելու պատրաստակամութիւնը: Մահը նիւթէն և նիւթեղէնէն անդին չի կրնար անցնիլ: Մահը իր յատուկ կորուստի գօրութիւնէն զատ ունի նաեւ խորհրդանշական իմաստ: Արժայութեան Դուռ և միսիթարութեան Ակնադրփեր Յիսուս կ'ըսէ.

«Աի՛ վախճա՛մ անոնցմէ, որ մարմինը կը սպաննեն, բայց հոգին սպաննել չեն կրնար. այլ դու՛ք աւելի վախցէ՛ք անկէ, որ կրնայ գեհե՛նի մէջ կորստեան մասնել հոգին և մարմինը»--Մատթ. Ժ. 28:

Սոյն խորհրդանշական իմաստը բացայայտելու համար, Յիսուս այցելեց Բեթանիա գիւղը, Ղազարոսի մահուընէն չորս օր յետոյ: Դէպի Բեթանիա ճամբայ չելած, Տէր Յիսուս աննախընթաց խօսակցութիւն մը կ'ունենայ աջակերտներուն հետ, ըսելով. *«Ղազարոս մտռա՛ւ. և էս ուրախ եմ ձեզի համար, որ հոն չէ՛ի, որպէսզի դու՛ք Ինձի հաւատա՛ն»--Յով. ԺԱ. 15:*

Յիսուս Քրիստոսի ուշանալը Ղազարոսի հիւանդութեան ասեն, ունի երկու դաստիարակչական նպատակ: Մին, լուսաբանել էր մահը ու երկրորդ սորվեցնել աջակերտներուն, թէ ի՞նչ քարոզուելու է յուղարկաւորութեան ու գերեզմանի մը առջեւ:

Անյոյս մահուան ու լուռ գերեզմանին կափարիչը բացող Յիսուս, Իր բարեկամ Ղազարոսի մահուան առթիւ ու անոր գերեզմանին առջեւ վկայեց, ըսելով.

«Ես իսկ եմ Յարութիւն և Կեանք»:

Վերոյիշեալ սոյն խօսքերը, որպէս կայծակնաբոց փայլատակումներ փարատեցին Մարթայի հոգեկան խաւարը: Ազաւոր Մարթա, ծնրադիր Յիսուս Մարգարէի Ոսկերուն առջեւ, լսեց շարունակութիւնը երկնայայտ պատգամին. *«Տե՛ղ որ կը հաւատայ Ինձի, թէպէտ մտռնի ալ, պիտի ապրի. իսկ ով որ կենդանի է և կը հաւատայ Ինձի՛ յաւիտեան պիտի չմտռնի: Կը հաւատա՞ն ասոր»--25:*

Ի՞նչ միսիթարական երկնացոյց երաշխիքներ և յուսադրիչ հաւաստիքներ կը ժայթֆեն աստուածառա՛մ Յիսուսի ծրթներէն: Մարթա մոռցած է իր սուգն ու յուսահատութիւնը ու կը վազէ սուն ու քրոջը Մարիամի կ'աւետէ ըսելով.

«Վարդապետ եկած է և բեզ կը կանչէ»:

Միրելի հաւատացեալներ, մեզմէ իւրաքանչիւրին սուգի պահուն, երբ կը կարծենք թէ կորսնցուցած ենք մեր սիրելին, Վարդապետ Յիսուս կու գայ, ու մե՛զ կը կանչէ: Ան կը կանչէ մեզ, ո՛չ թէ մահուան և անէացման, այլ միխիթարութեան և յուսադրութեան: Յիսուս Քրիստոս Կեա՛նք է: Ան կը բաշխէ՛ և կու տայ, կը միխիթարէ՛ ու կը բաջալերէ: Ան կը բանա՛յ երկինքը ու կը յայտնէ գերեզմանէն անդինը: Յիսուս մեր Յո՛յսն է, մեր յաւիտենական Կեանքը: Մեզ հողայնութենէ դէպի հոգեղինութեա՛ն փոխակերպող յաղթական Յարուցեա՛լն է Ան: Ինչպէս Մարթային, մեզի՛ ալ կը խօսի, ըսելով.

«Բեզի չըսի՞, որ եթէ հաւատաս Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:

Մի միայն իրիկուան խաւար մթութեան մէջ քալողներուն, սուգի և յուսահատութեան մէջ եղողներուն, կ'երեւի աստեղազարդ երկնակամարը: Աստեղազարդ գեղեցկութիւնը հո՛ն է, մեր ընելիքը միայն գլուխնիս վե՛ր առնել ու նայի՛լ է տեսնելու և հաւատալու համար, որ մեզմէ բաժնուողները չեն կորսուած: Ո՛չ որովհետեւ անոնք երկինք գացած են, այլ որովհետեւ մեռելոց յարութեան խոստումը կայ: Եթէ մեռնելով երկինք կ'երթան մարդիկ, ինչո՞ւ արդեօք ապրողներ մեռնիլ չեն ուզեր: Քրիստոս ո՛չ թէ մահուան Դուռն է, այլ կեանքի՛ և յաւերժական Յարութեա՛ն: Մարիամ երբ կու գայ ու կը տեսնէ Յիսուսը՝ կ'իյնայ Անոր Ոսբերուն ու կ'ըսէ. «Տէ՛ր, եթէ այստեղ եղած ըլլայիր՝ իմ եղբայրս մեռած չէր ըլլար»:

Յիսուս Իր Հոգիին զօրութեամբ միջոս մեր բովն է: Մե՛նք կը կարծենք թէ Ան կը բացակայի, կամ չլսեր մեզ, կամ չհետաքրքրուի մեզմով: Երբ Յիսուս կը տեսնէ թէ Մարիամ կու լայ, և անոր հետ եղող հրեաներն ալ կու լան, ***երկնառաք՝ Մարդեղութիւնն ալ կ'արտասուէ:*** Հրեաները երբ կը տեսնեն Յիսուսի լալը, կ'ըսեն.

«Տեսէ՛ք, որչա՛փ կը սիրէր զայն»:

Յիսուս Քրիստոս ո՛չ թէ միայն ներկայ է մեր մօտ մեր սուգի ու նեղութեան օրերուն, այլ նոյնիսկ Ան կը ***մասնակցի՛*** մեր սուգին ու կու լա՛յ մեզ հետ: Ան մասնակից է թէ՛ մեր ուրախութեան և թէ՛ մեր ցաւին: Յիսուս յուզուած Իր բով լացողներուն

համար, կը հարցնէ. «Ո՞ր դրի՞մ Ղազարոսի մարմինը»: Ազակիրները կ'ըսեն Յիսուսի. «Տէ՛ր, եկո՛ւր և տե՛ս»: Յիսուս արտասուելով կու գայ գերեզման, որ բարայր մըն էր:

Յիսուս սէր էր Իր վարդապետութեան մէջ:
Սէր էր իր գործունէութեան մէջ:
Սէր էր իր չարչարաններուն մէջ:
Սէր էր նաեւ խաչին վրայ:

Ան Սէր է նոյնիսկ Ղազարոսի գերեզմանին առջեւ: Ան իբրեւ ճշմարիտ և սրտցաւ Բժիշկ, հոն գտնուողներէն ոմանց կը պատուիրէ ըսելով.

«Այդ քարը մէկդի՛ ըրէ՛ք»:

Գալիլիոյ ծովուն փոթորիկը հանդարտեցնող Յիսուս, կոյրին աչքերը բացող Մարգարէն միթէ չէ՞ր կրնար գերեզմանին քարը մէկդի ընել: Ինչո՞ւ հրամայեց որ ուրիշներ մէկդի ընեն քարը: Մարդկային կենցաղավարութեան և որոշումներու մէջ կա՛ն հարցեր ու վճիռներ, որոնց չուզեր դաչիլ Յիսուս: Ան՝ Իր աստուածազօր կարողութեամբ, չուզեր դաչիլ **մեր ազատ կամֆին**: Աստուած մարդ արարածը անասուններու դասակարգէն վեր դրած է: Եթէ միջամտէ մեր ազատ կամֆին, մեզ ալ ստորադասած կ'ըլլայ կենդանիներու և չորհոտանիներու համակարգին: Աստուած կ'ուզէ մե՛ր համագործակցութիւնը Իր ծրագրի իրագործումին մէջ: Ոչ թէ որովհետեւ Ինձ անկարող է, այլ որովհետեւ մեզ կը սիրէ ու կը շանայ մեզ Իր որդիները ընել:

Յիսուս «Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց Իր իսկ ստեղծած մարդիկը զինձ չընդունեցին: Իսկ Ձինձ ընդունող ներսն է և Իրեն հաւատացող ներսն է իշխանութիւնն է տաւա Աստուծոյ որդիները ըլլալու» - Յով. Ա. 11-12:

5-րդ և 6-րդ դարերու հայ փիլիսոփայ՝ Դաւիթ Անյաղթ, նեոպլատոնականութեան հետեւորդ «Կամֆի ազատութիւն»ը կը դիտէ որպէս կատարելութեան համար մարդու մղած պայքարի անհրաժեշտ բաղադրամասը: Մարդ արարածներուն շնորհուած **ազատ կամֆը**, աստուածային մասնիկը, պարտ էր որ ապացուցուի՛, նախ քան որ մարդ էակ արժանանայ յաւիտենական կեանքի:

Մարդիկ որքան ալ նախասահմանումով մը ծնած ըլլան, իրենց կամքով և վճռակամութեամբ յաճախ կրնան հակազդել նախասահմանեալ ճակատագրի մը պարտադրանքներուն և փոխել անոնց ընթացքը: Ոչ ոք իրաւունք ունի ըսելու թէ ճակատագրականութիւնը անձի մը կամքէն աւելի հզօր է: Որքան աւելի կատարելագործուինք, այնքան աւելի կը խուսափինք ճակատագրէն:

«Խնդրեցէ՛ք Աստուծովէ և պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք և պիտի գտնէ՛ք, բախեցէ՛ք և պիտի բացուի ձեզի: Արովհետեւ խնդրողը կը ստանայ, փնտրողը կը գտնէ և բախողին առջեւ դռնը պիտի բացուի»: Ղուկ. ԺԱ. 9:

Վերոյիշեալ զեկոյցը և յայտարարութիւնը մարդու ճակատագիրը կը չեզոքացնէ ու ազատ կամքի գործածութիւնը կը զօրացնէ: Մարդ այլեւս իր կոյր ճակատագրին ստրուկը դառնալէ կը դադրի, որովհետեւ իր *խնդրանքով*, իր *թակելոյ* ու իր *փնտռելոք* ազատ զօրութեամբ կրնայ փոխել իր նախասահմանուած կարծեալ վիճակը: **«Եւ անոնք որ դպան՝ բժշկուեցան»**--Մարկ. 2. 56:

Անոնք որոնք ուզեցին փոխել իրենց ճակատագիրը, կրցան *բարեկաւել գայն*:

Յիսուս ինչո՞ւ գնաց մինչեւ Ղազարոսի գերեզմանը, չէ՞ որ ան չորս օրուայ մեռած էր: Յիսուս՝ Իրեն հաւատացողին համար, "մեռաւ" բառին փոխարէն "ննջեց" բառը կը գործածէ: Ան ըսաւ աշակերտներուն. *«Մեր բարեկամը՝ Ղազարոս, ննջեր է, տակայն երթեալ արթնցնեմ գայն»* --ԺԱ. 11: Մարմինին համար պատահած մահը՝ բուն է, որովհետեւ մահկանացութիւնը կեանքի մը մէկ ակնթարթն է ժամանակի տեւողութեան մէջ: Բուն մահը՝ հոգիին մահն է: Ղազարոսին վաղահաս մահը անլուր սուգի մատնած էր իր հարազատ բոյրերը:

Յիսուս դեմ դիմաց կը գտնուէր մահուան հետ Ղազարոսի գերեզմանին առջեւ, ու կ'իմանար մահուան դարաւոր յոխորտանքը որ կ'ըսէր.

«Ո՛վ մարդ, ո՞ւր է բու կեանքդ, ե՛ս եմ բու վախճանդ»:

Յիսուս չդիմանալով չար մահուան ամբարտաւան ինքնագովութեան, բացաւ Իր օրհնեալ ծրթները և մխիթարեց մարդկութիւնը հետեւեալ խօսքերով.

«Պիտի գայ ժամանակ, երբ քուրդ անուն որ գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ջախը և դուրս պիտի ելլեն, անուն որ բարի

գործերը ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չար գործերը ըրած են՝ դատաստանի յարութեան համար» -- Յով. Ե. 28:

Յիսուս նայեցաւ Իր շուրջը, դիտեց իւրաքանչիւր սգաւորը, արտասուողը և թերահաւատը ու քաղցր քաջութեամբ ըսաւ Մարթայի.

«Ընդ եղբայրդ յարութիւն պիտի առնէ»:

Ու երբ ան տակաւին կը թերահաւատէր, Յիսուս կրկին ըսաւ անոր.

«Ես եմ Յարութիւնը և կեանքը»:

Վեհապանծ Յիսուսի սոյն խօսքերը շփոթութեան մատնեցին շուրջինները որոնք ջատ քիչ բան հասկցած էին ցարդ: Երբ անոնք վերցուցին քարը, Յիսուս աչքերը վեր բարձրացուց դէպի երկինք և ըսաւ. *«Հա՛յր, ջնորհակալութիւն Զեզի՛ որ լսեցիր զիս: Գիտեմ որ միշտ կը լսես զիս. բայց ինչ որ այժմ կ'ըսեմ՝ ջուրջս գտնուող ժողովուրդին համար կ'ըսեմ, որպէսզի անոնք հաւատան թէ Ինչ նորկեցիր Ձիս»:* Սոյն աղօթքէն յետոյ, կեանք Բաշխող Յիսուս դարձաւ դէպի մահացեալ մարմնին ու գոչեց, ըսելով.

«Ղազարո՛ս, ելի՛ր. դո՛ւքս եկուր»:

Եւ մեռելը ելաւ, կապուած ոտներով, ձեռները երիզներով ամրացած և երեսը վարջամակով փաթթուած: Յիսուս ըսաւ Իր շուրջիններուն. *«Արձակեցէ՛ք զայն և թողէ՛ք որ երթայ»:* Կալանաւոր ու մահէն առեւանգուած Ղազարոս դուքս ելաւ մահուան ճիրաններէն ու սարսափահար մահը փախաւ հզօրաջեջտ Կեանքի Անձնաւորեալ՝ Ներկայութենէն:

Հաւատացեալի մը յուղարկաւորութիւնը մեծագոյն պատեհութիւնը ըլլալու է օրուան քահանային որ պանծացուի ու փառաբանուի Մեռելոց Յարութիւնն ու Քրիստոսի տարած յաղթանակը մահուան վրայ: Այսօր, ո՛չ միայն անհաւատներ կարիքը ունին իմանալու Քրիստոսի յայտնաբանած յաւիտենական կեանքը, այլ նաեւ թերահաւատ հաւատացեալները: Համայն մարդկութիւնը կը լռէ մահուան անիմանալի և անագնազօր ներկայութեան և խորհուրդին առջեւ:

Պօղոս առաքեալի Քրիստոսը, Յիսուս Նազովրեցին չէր միայն, այլ Բարձրեալը, հզօր աստուածային անձնաւորեալ Հոգին, որ մահուան իջխանութիւնը խորտակեց: Մահուան և մեղքի իջխանութիւնը խորտակող Քրիստոս կենդանի է իբրեւ Ոգի, ու կ'ապրի

հաւատացեալներու հոգւոյն մէջ: Յիսուս Բրիստոս յաղթեց մահուան սորվեցնելով աշխարհի, թէ մեղքը աւելի մահարար է քան որդը, և թէ հոգւոյն սրբութիւնը միակ գմուռսն է, որ կը պահպանէ մարդը ապականութենէ ու կ'երաշխաւորէ անոր յաւիտենական կեանք:

Բրիստոսի Եկեղեցին բարձրագլուխ և անյողթողդ կանգնելով է մահուան դագաղին առջեւ ու որոտագին գոչելու:

«Բրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ինչո՞ւ, որովհետեւ մահուանէ անդին հեռուն, հաւատացեալի մը համար կայ *հոգեւոր հայրենիք*, մեռելոց յարութեան խոստովմ, իսկ անհաւատի մը համար անբարբառ *անծանօթ* վայր մը և գաղտնի *մղձաւանջ*: Բաջ նահատակ Պօղոս առաքեալ կ'ըսէ.

«Ինչպէ՞ս ձեր մէջէն ոմանք կ'ելլեն ըսելու՝ թէ "Մեռելներու յարութիւն չկայ": Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Բրիստոս ալ յարութիւն չէ առած. և եթէ Բրիստոս յարութիւն առած չէ՝ զուր է մեր Բարոգութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը»:

Գերեզմանին ու մահուան առջեւ, հաւատացեալ Բրիստոնեայի մը յաղթական մաղթերգը ըլլալու է հետեւեալը.

**«Ո՛ւր է, մա՛հ, քու յաղթութիւնդ.
Ո՛ւր է, դժո՛խք, քու խայթոցդ»:**

«Ինչպէս որ հողեղէնիս պատկերը առինք, այնպէս ալ պիտի առնենք երկնաւորին պատկերը: Պիտի նորոգուինք յանկարծակի, ակնթարթի մը մէջ. վերջին փողի առեն, քանի որ փողը պիտի հնչէ, և մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան, մենք ալ պիտի նորոգուինք. քանզի պէտք է որ այս ապականութիւնը անապականութիւն առնէ, և այս մահկանացու գոյութիւնը՝ անմահութիւն»--Ա. Կորթ. ԺԵ. 49-55:

**Յունուար 4, 1998
Թորոնթօ**

“ԵՍ՝ ՏԵՐՍ ՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՁԵՐ ՈՏՔԵՐԸ ԼՈՒԱՅԻ, ԳՈՒՔ ԱԼ ՊԱՐՏԱՒՈՐ ԷՔ ԻՐԱՐՈՒ ՈՏՔԵՐԸ ԼՈՒԱԼ”

--Յոզ. ԺԳ. 14

Յիսուս Վարդապետ ի՞նչ ջանաց սորվեցնել մեզի, լուալով աջակերտներուն ոտները: Միթէ քրիստոնեաներ, Սուրբ Հաղորդութենէ առաջ, իրարու ոտները լուալու են: Երբ այցելութեան երթանք մեր բարեկամներուն, նախ քան հիւրասիրուելու անոնցմէ, իրարու ոտները լուալու ենք: Ի՞նչ էր Յիսուսի գործնականօրէն աջակերտներու ոտները լուալու արարփին խորհուրդը:

Միթէ Մեծ Պահփի վերջաւորութեան, հոգեւորականներու, սոյոց մահուր ոտներու լուացումը բաւարար է որ, հաւատացեալներ հասկնան ա՛յն խորհուրդը, որ մեր Տէրը ջանաց դրսեւորել Իրեն հետեւորդներուն: Յիսուս Քրիստոս օրին մէջ սաւառնող գաղափար մը չէ՛: Ան ո՛չ միայն կը պատմէ և կը քարոզէ, այլ կը նկարէ և կը թանձրացնէ՝ Իր խորհրդագգաց արարփները: Որպէս բարձունքի և վսեմութեան Մարմնացում, Յիսուս խնայարհեցաւ ու յայտնեց Իր սերը հանդէպ աջակերտներուն լուալով անոնց **աղտոտ** ոտները:

Յաւերժաւանդ Խորհուրդ Յիսուս գերագոյն Իրականութիւնն է բոլոր ժամանակներուն: Յիսուսի ցոյց տուած "ոտնլուան" դատերգութիւն մը չէ՛, եկեղեցիներու մէջ կատարուելիք, այլ՝ ցուցադրութիւն մը ըլլալէ աւելի՝ գործադրուած առակ և կատարուած **խորհուրդ** մըն է:

Քրիստոնեան ինչպէ՞ս կրնայ լուալ ոտները իր եղբօր կամ քրոջ:

1. Ա՛յն քրիստոնեան, որ սիրոյ պակասը ունի ու կը գրպարտէ ուրիշ մէկ հաւատացեալ մը, Յիսուսի հետեւող քրիստոնեան անմիջապէս հասնելու է օգնութեան և լուալու է գրպարտութեան աղտը իր եղբօր կամ քրոջը վրայէն:
2. Բազմաթիւ հաւատացեալներ անգէտօրէն կը բամբասեն ուրիշները, իմաստուն հաւատացեալները անմիջապէս լուալու են սոյն բամբասանքին աղտը իրենց եղբօր կամ քրոջ վրայէն, ներկայացնելով ինդրին միւս դեմքն ալ:
3. Հեռաձայնը, թէեւ առեւտուրի համար կը գործածուի, սակայն ալ աւելի կը գործածուի, դժբախտաբար, չարախօսութեան և ուրիշներու սուտ վկայութեան համար:

Դիոգինեսին (404-323) հարցուցին, թե ո՞ր կենդանիի խայթոցը ամենէն վտանգաւորն է: Ան պատասխանեց ըսելով.

***«Գիշտախններէն՝ զրպարտիչինը,
իսկ ընտանիներէն՝ շողոմորթի խայթոցը»:***

Անանիա Շիրակացի եօթներորդ դարու լուսաւոր դեմք մըն էր: Անանիա Շիրակացին եւս, Մովսէս Խորենացիի, Ղազար Փարպեցիի և ուսումնասէր այլ հեղինակներու նման լուրջ հալածանքներու ենթարկուած են հայրենիքին մէջ: Ղազար Փարպեցի մեռած է մօտ 85 տարեկանին: Ան Գտաւ հալածանք և զրպարտութիւն, չկամութիւն և անտարբերութիւն:

Աստուածային ու մարդկային մօտեցումներու մէջ սիրոյ հսկայ տարբերութիւնը կը տեսնենք Յովհաննէս Մկրտիչի խոնարհ յայտարարութեան մէջ, ան կ'ըսէ.

***«Ես անոր (Յիսուսի) կօշիկին կապերն իսկ
բակելու արժանի չեմ»***

--Ղուկ. Գ. 16:

Իսկ Աստուծոյ Միածինն Յիսուս կը լուայ աջակերտներուն աղտոտ ոտները: Ո՛չ միայն Իր սիրելի աջակերտներուն ոտները, այլ նաեւ Զինք մասնող Յուդայի՛ ալ ոտները: Ծատ և չափազանց դժուար է ըմբռնել կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուսի սէ՛րն ու ողորմութիւնը առ մարդ արարածը: Յիսուսի ձայնը, այսօր ալ, երկնքի խորութիւններէն կը շարունակէ հնչել քաղցր սրինգի նման որ կ'ըսէ մեզի՝ բոլորիս.

***«Եթէ ես՝ Տէրս և Վարդապետս, ձեր ոտները լուացի,
դուք ալ պարտաւոր էք իրարու ոտները լուալ»:***

Մեզմէ քանի՞ անձեր մե՛ր ըրած չարախօսութիւնները և բամբասանքները ջանացած ենք մաքրագործել, ու նաեւ ուրիշներու զրպարտութիւնները մաքրել մեր բարեկամներու վրայէն ու սրտերու մէջէն: Պետրոս առաքեալ կը գրէ ըսելով. *«Անձեռագլխաւորը, եղէ՛ք հաւախոյնուորը, կարեկից, եղբայրասէր, ազնուագութ, խոնարհ, չարի փոխարէն չար բան մի հատուցանէ՛ք, կամ բամբասանքի փոխարէն բամբասանք»*:-Ա. Պետ.Գ. 8-9:

Բամբասանք չգոյ պէտք է ըլլայ քրիստոնեաներու միջեւ.

Հաւատացեալ մը ի՞նչպէս կը մաքրագործէ ի՛ր և ուրիշին գործած բամբասանքները: Նուիրումի և տառապանքի հնոցին մէջ առաւելաբար, ուր կը մաքրագտուի և կը վերընձիւղի հաւատքի ոգին: Թէ՛ հաւատքը և թէ՛ արուեստը սուրբ և վսեմ են, և անոր սպասարկուները՝ պարկեշտ և մաքրակենցաղ ըլլալու են: Կայ չարութիւն, կայ մեղանչում և ալլատերում, բայց կայ նաեւ ստեղծագործութիւն, և բարձր ոլորտ, և աղօթք, և սրբութիւն, և մաքրութիւն:

Երբ եկաւ Սուրբ Հոգին, հաւատացեալները եղան համակ հաւատք, Բաջութիւն, ճանաչում, խօսք և սէր: Հաւատացեալը երբ վերջապէս հասնի լոյսի Ակնաղբիւրին՝ Յիսուսի, անզգոյշ թիթեռնիկներու պէս չի՛ մոխրանար անոր բոցին մէջ, այլ

կը սրբանայ և կը ստանայ յաւիտենական կեա՛նք:

Մայիս 4, 2000

Թորոնթօ